ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

30 Նոյեմբերի 2019 թ.
№ 15 (1049)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 54-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԸՆՏՐՎԵՑԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Վարդուհի ՄԿՐՏՉՅԱՆ
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ

Տաթև ԱՐՇԱԿՅԱՆ
Պատմության և իրավագիտության ֆակուլտետ

Գոհար ՔՈԼՈՋՅԱՆ
Սկզբնական կրթության ֆակուլտետ

Նարինե ԹԱԹՈՅԱՆ
Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ

Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետ

Տաթևիկ ՍԱՅԱԴՅԱՆ
Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետ

Անուշ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ

Մանուշակ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետ

Արմինե ԹԱԹՈՅԱՆ
Օտար լեզուների ֆակուլտետ

Վարդուհի ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գեղարվեստական կրթության ֆակուլտետ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Մանկավարժական համալսարանի Գիտական խորհրդի հերթական նիստում, ավանդույթի համաձայն, բուհի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը շնորհավորեց ամսվա հոբելյարներին, ապա Հայոց պատմության ամբիոնի դոցենտ Խաչատուր Ստեփանյանին շնորհեց պրոֆեսորի գիտական կոչման վկայագիր:

Ավարտական աշխատանքների վերաբերյալ նոր պահանջներ և գնահատման չափանիշներ

ՀՊՄՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը Գիտական խորհրդի անդամներին ներկայացրեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման պահանջների և գնահատման չափանիշների որակավորումների ազգային շրջանակներին համապատասխանեցման վերաբերյալ հարցը:

Պրոռեկտորն ընդգծեց, որ բակալավրի ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի կատարման բովանդակային առանձնահատկությունները հստակեցնելու նպատակով հանձնարարվել է ֆակուլտետներում, ամբիոններում կազմակերպել քննարկումներ, վերամշակել դրանց առկա նորմատիվ հիմքերը, վերամշակված կարգերը ներկայացնել ՀՊՄՀ Գիտական խորհրդի նիստի քննարկմանն ու հաստատմանը:

Սրբուհի Գևորգյանը ներկայացրեց դրույթներ Բակալավրի ավարտական աշխատանքների կազմակերպման, իրականացման և գնահատման և Մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգերից՝ առանձնացնելով այդ աշխատանքների համար սահմանված նոր պահանջներն ու հստակ սահմանումները:

Պրոռեկտորը Գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեց վերոնշյալ համալրված կարգերը, որոնցում հստակ սահմանվել են բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի կառուցվածքային տարրերը, բովանդակության ձևավորման հիմնական պահանջները, պատրաստման և պաշտպանության ժամանակացույցը, գնահատման չափանիշներն ու չափորոշիչները և հատկացվող միավորները:

Ռեկտորն ընդգծեց, որ կարգերում հստակ նշված են մոտեցումներն ու խնդիրները, որոնց պետք է համապատասխանեն աշխատանքները:

➤2

«Գրան պրի» և 1-ին կարգի մրցանակներ

Նոյեմբերի 22-ին Երևանում տեղի ունեցավ «Golden Voice» երգի միջազգային մրցույթը, որին մասնակցում էին Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Լեհաստանի, Լիբանանի, Մոլդովայի, Բելառուսի, ՌԴ-ի, Հայաստանի և այլ երկրների շուրջ 90 ներկայացուցիչներ:

Մրցույթի միջազգային ժյուրիի կազմում ընտրվել էին ոչ միայն Հայաստանի, այլև տարբեր երկրների երաժիշտներ: Հայաստանը ներկայացնում էին նաև Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտական կրթություն մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհիներ Մարի Ավետիսյանը և Ռիտա Հովհաննիսյանը: Նրանք ներկայացան pop վոկալ ժանրով, որտեղ Մարի Ավետիսյանն արժանացավ «Գրան Պրի», իսկ Ռիտա Հովհաննիսյանը՝ 1-ին կարգի մրցանակի: Դասախոս Մերի Կարապետյանի սաները հրաշալի ելույթ ունեցան, և դահլիճը հոտնկայս ծափահարեց նրանց:

Շնորհավորում ենք մեր համալսարանի ուսանողուհիներին և մաղթում նոր հաջողություններ:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

➢1 «Երբեմն ունենք իրավիճակներ, երբ չի արտացոլվում իրական պատկերը, իսկ մի շարք մասնագիտությունների գծով աշխատանքի պաշտպանությունը կրում է ձևական բնույթ: Մինչ ուսումնական տարվա ավարտը ժամանակ կա լուրջ հետևություններ անելու, ինքնուրույն և չարտագրված աշխատանքներ պաշտպանության չերաշխավորելու համար»,-նշեց ռեկտորն ու գիտական խորհրդի անդամներին կոչ արեց լինել օբյեկտիվ, ինչը կնպաստի, որ մեր երկրում չարժեզրկվի ուսուցչի ինստիտուտը:

Ներկայացվեց Ուսանողական խորհրդի գործունեությունը

Անցնող տարվա ուսանողական խորհրդի գործունեության և արդյունքների մասին զեկուցեց ՈՒԽ նախագահ Պարույր Գալստյանը՝ ներկայացնելով իրականացված ծրագրերը՝ արշավներից մինչև մշակութային միջոցառումներ, միջբուհական մրցաշարերից մինչև մասնակցություն «Ամառային դպրոց» միջազգային ծրագրին: Պարույր Գալստյանն առանձնակի կարևորեց ուսանողական կառույցի 25-ամյակին նվիրված միջոցառումների շարքը և ընդգծեց, որ ուսանողական ամենահետաքրքիր ձեռնարկները դեռ առջևում են:

Գիտական խորհրդի անդամներն ՈՒԽ ուշադրությունը հրավիրեցին իրականացվող ծրագրերին, առաջարկեցին միջոցառումներին ներգրավել առավել շատ թվով ուսանողների, աշխատանքների համար հիմք ընդունել ուսանողների սոցիալական խնդիրներն ու պահանջները, կատարել ընդհանրական վերլուծություն, ինչպես նաև ընդլայնել կապերն արտերկրյա ուսանողական և երիտասարդական կազմակերպությունների հետ՝ նպաստելով ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացմանը:

Ընտրություններ

Գիտական խորհրդի անդամները փակ քվեարկությամբ ներկայացված թեկնածուներ Արմեն Աջամօղլյանին, Սուսաննա Խաչատրյանին, Սիրարփի Խաչատրյանին և Սվետլանա Մուրադյանին շնորհեցին դոցենտի գիտական կոչում:

Փակ քվեարկությամբ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արթուր Թադևոսյանին Գիտական խորհուրդն ընտրեց Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Սաթենիկ Մելիքյանին՝ Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչի, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Պիպոյանին՝ Կենսաբանության, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնում, իսկ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Միքայելյանին՝ Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում:

Ընթացիկ հարցեր

Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը Գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեց ՀՊՄՀ-ում հետբուհական կրթության հայցորդական համակարգի ուսման վարձի մասին հարցը, ինչպես նաև թեկնածուական ատենախոսությունների թեմաներն ու հրատարակության երաշխավորած գրքերը:

Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Արա Երեմյանը Գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեց ՀՊՄՀ-ում, բուհի հենակետային վարժարանում և հիմնական դպրոցում ոչ ֆորմալ լրացուցիչ կրթական դասընթացների իրականացման և ՀՊՄՀ-ի Բարեվարքության կանոնակարգում լրացումներ կատարելու վերաբերյալ հարցերը:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

Գիտագործնական համաժողով

2007 թվականից ՀՊՄՀ-ի արտասահմանյան գրականության ամբիոնն անցկացնում է միջբուհական գիտագործնական գիտաժողովներ, որտեղ ներկայացվում և քննարկվում են համաշխարհային գրականությանը, գրական կապերին և գեղարվեստական թարգմանությանը վերաբերող տարաբնույթ հարցեր:

Գիտաժողովների նյութերի հիման վրա յուրաքանչյուր տարի հրատարակվում են գիտական աշխատությունների ժողովածուներ:

Հերթական՝ տասներկուերորդ գիտաժողովը, որն անցկացվեց ՀՊՄՀ Պուշկինի անվան լսարանում, զեկուցումներով հանդես եկան բ.գ.դ., պրոֆեսոր Ռուզան Թադևոսյանը, բ.գ.թ., դոցենտներ Քրիստինա Բեջանյանը, Իննա Սարգսյանը, Ստելլա Նուրալովան, Անի Սահակյանը, հեռուստառադիոլրագրության և ռոմանագերմանական լեզուների ամբիոնների ասիստենտներ Գայանե Վարդազարյանը և Ռուզաննա Ասատրյանը, Երևանի Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի համաշխարհային գրականության ամբիոնի բ.գ.թ., դոցենտ Կարինե Գուլանյանը, ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի բաժնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Սիրանուշ Մարգարյանը:

Գիտաժողովին մասնակցում էին դասախոսներ, մագիստրոսներ և ուսանողներ: Ողջույնի խոսքով ելույթ ունեցավ ՀՊՄՀ Օտար լեզուների ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Տիգրան Միքայելյանը:

Բանախոսների ներկայացրած ուսումնասիրությունները բազմաբնույթ էին. դրանք նվիրված էին համաշխարհային գրականության դասականների ստեղծագործությունների, ինչպես նաև գեղարվեստական թարգմանության և միջմշակութային հարաբերությունների խնդիրներին:

Գիտաժողովում ներկայացված թեմաները մեծ հետաքրքրություն առաջացրին ներկաների շրջանում, եղան հարցեր, հնչեցին տեսակետներ, ծավալվեց քննարկում:

Արտասահմանյան գրականության ամբիոն

Գրական միջավայրում

Հայաստանի Գրողների միության հիմնադրման 85-ամյակի կապակցությամբ Մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետում կազմակերպվել էր դասախոսների և ուսանողների հանդիպում միության անդամների հետ: Հրանտ Մաթևոսյանի անվան լսարանում գրող, հրապարակախոս, թարգմանիչ Ռազմիկ Դավոյանը, արձակագիր, դրամատուրգ Նորայր Ադալյանը, գրականագետ Պետրոս Դեմիրճյանը, բանաստեղծուհի Սուսաննա Հարությունյանը, Տեր Թովմա Անդրեասյանը (Վահան Անդրեասյան, բանաստեղծ, ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի շրջանավարտ) ուսանողական լսարանի առջև անկեղծանալով՝ հետաքրքիր հուշեր ու դրվագներ պատմեցին իրենց ուսանողական և գրողների միության անդամության տարիներից:

Ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանի բացման խոսքից հետո ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՊՄՀ պրոֆեսոր, ՀԳՄ անդամ Աելիտա Դոլուխանյանը խոսեց ՀՀ Գրողների միություն-Մանկավարժական համալսարան գործունեության մասին՝ մասնավորաբար ընդգծելով Հայաստանի գրողների հետ Բանասիրական ֆակուլտետի ուսանողների պարբերական հանդիպումները և ֆակուլտետի ՀԳՄ «Գրական թերթ»-ի ակումբի անդամների հանդիպումները թերթի խմբագրակազմի հետ:

Պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը կարևորեց գրողների հետ հանդիպումները. «Գրողների միությունն ինձ հարազատ է դեռևս ուսանողական տարիներից: Այս լսարանում են սովորել Հրանտ Մաթևոսյանն ու Ռազմիկ Դավոյանը, այս լսարանում ես դասավանդել եմ Սուսաննա Հարությունյանին: Լսարանն այժմ կրում է մեծանուն գրողի՝ Հրանտ Մաթևոսյանի անունը: Ուսանողական տարիներին մեր մշտական հյուրերն են եղել Պարույր Սևակը, Հովհաննես Շիրազը, Համո Սահյանը, Վահագն Դավթյանը և Սիլվա Կապուտիկյանը: Ես հպարտ եմ, որ գրողների միջավայրում եմ, կարդում եմ նրանց ստեղծագործությունները և դրանք ներկայացնում իմ ուսանողներին»:

Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանն անդրադարձավ Գ. Նարեկացու տաղերում գործածված մի քանի բառերի, որոնք նրա կատարյալ լեզվի մեջ են անցել թերևս միջին կամ նախամիջին հայերենից:

Բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ, գրականագետ Նաիրա Խաչատրյանը ներկայացրեց Ռազմիկ Դավոյան գրողին, բանաստեղծին ու անհատին՝ իր հիացմունքն արտահայտելով բազմաժանր հեղինակի ստեղծագործական ժառանգության հանդեպ. «Ռազմիկ Դավոյանը հայտնվեց ժամանակակից գրականության հին ու նոր սերունդների գրական խաչմերուկում և հաջող քննությունն բռնեց՝ ստանալով նախորդների գնահատումը որպես օրհնություն, իսկ գրական նոր սերնդի համար պոեզիայի ավանդների շարունակող ու հարստացնող դարձավ»:

-Ես ծնվել եմ,
Պիտի շռայլորեն ապրեմ,
Ապրեմ երկրիս բախտով,
Ապրեմ ձեզնով,
Ինձնով,
Ապրեմ, քանի դեռ կամ…

Քանզի «գոյության անվերջանալի պայքարի մեջ ամեն ոք ունի իր լինելու պատճառաբանությունը, առավել ևս բանաստեղծները: Յուրաքանչյուրը փորձում է ինքնաարտահայտմամբ դրսևորել իրեն՝ իհարկե ներդաշնակության պատնեշները չփշրելով»,-ասաց Ն. Խաչատրյանը:

ՀԳՄ քարտուղար Պետրոս Դեմիրճյանը դեռևս Հրաչյա Աճառյանի համալսարանում դասավանդելիս է շփվել ուսանողների հետ: 1972 թվականից ՀԳՄ անդամ է: Ինտրայի ստեղծագործությանն էլ նվիրված ատենախոսությունը գրելիս մշտապես կապի մեջ է եղել Բանասիրական ֆակուլտետի դասախոսների հետ, իսկ 1985-ին, երբ դեռ մտավոր ազատությունը երբեմնի կապանքներից չէր ազատվել, Ինտրայի 70-ամյակին նվիրված գիտաժողովում հանդես եկավ զեկուցումով:

«Շարունակությունն է կարևորը»,-ասաց գրականագետը՝ 85 տարվա հեռավորությունից հիշելով, որ «Գրական թերթ»-ում ժամանակին զավեշտալի նյութեր էլ են տպվել, բայց ունեցել ենք նաև հրաշալի ընթացք:

Ամփոփելով ելույթը՝ նա ուսանողներին հորդորեց՝ պետք է լավ իմանաք մեր լեզուն ու գրականությունը, որպեսզի ապագան լավ կառուցեք:

Բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը նախ ընդվզեց հայոց լեզուն ու գրականությունը, հայոց պատմությունը բուհերում ոչ պարտադիր համարող բուհական նոր նախագծի դեմ, ապա սիրով հիշեց իր ուսանողական տարիները, երբ ակադեմիկոս Աշոտ Աբրահամյանի աջակցությամբ, ով Աճառյանի ուսանող էր եղել, իր ուսումնառությունն անցկացրեց Հրաչյա Աճառյանի տան գրադարանում:

«Հրաշալի ուսանողական տարիներ եմ ունեցել, մեզ վրա ազդում էր միայն գաղափարական ճնշումը»,-անկեղծացավ բանաստեղծը՝ ուսանողներին հորդորելով՝ պայքարել մեր լեզվի ու պատմության գլխին կախվող բոլոր փորձությունների դեմ:

Պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը կիսեց Ռազմիկ Դավոյանի մտահոգությունները «մեր փոքր, բայց մեծ ժառանգություն ունեցող երկրի բախտի հանդեպ»՝ նաև փաստեց, որ «մեր ուսանողները հայրենասեր են, որովհետև այս մարկետինգի դարում ընտրել են Բանասիրական ֆակուլտետը»:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գեղեցիկի ընկալման ընդհանրությունները

Նոյեմբերի 18-ին «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնում հանդիպեցին համալսարանի Բանասիրական, Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետների ուսանողները: Առիթն ավելի քան պատեհ էր: Մաթեմատիկայի գծով ճանաչված պրոֆեսոր Համլետ Միքայելյանը վերջին շրջանում հրատարակել է լեզվի և մաթեմատիկայի ներքին կապերը բացող մանկավարժական մի քանի գրքեր, որոնց շուրջ էլ ծավալվեց աշխույժ քննարկում ուսանողների և նրանց դասախոսների՝ պրոֆեսոր Սուրեն Դանիելյանի և Համլետ Միքայելյանի գլխավորությամբ, որոնց բացման խոսքն արդեն ուղղորդեց նրանց՝ մխրճվելու գեղեցիկի և մաթեմատիկայի չափորոշիչների հայտածումների մեջ: Իրար ընդհատելով՝ երկու ֆակուլտետների ուսանողները փորձում էին վերհանել լեզվի «վիպային» և մաթեմատիկայի բանաձևերի ճշգրիտ ուղիները, այն բոլորը, ինչ պիտի որ խորապես հարստացնի մտածողության դարպասների մոտ խռնված մեր երիտասարդությանը: Բանասերների երրորդ և մաթեմատիկոսների երկրորդ կուրսերի ուսանողների միջև դասախոսների շնորհիվ ստեղծվեց հաղորդակցման միջավայր, որտեղ բանաստեղծական ընկալումը, բանավեճի սուր հակվածությունը դարձան աշխարհաճանաչության հուսալի կամուրջներ, ջերմության և անմիջականության մթնոլորտ, հենց այն, ինչին ձգտում էին դասախոսներն իրենց գրքերով, խոսքով:

Նրանց նախաձեռնությունը, հիրավի, բացեց շփումների դուռ հետագա հանդիպումների համար: Ուսանողները համոզվեցին, որ մաթեմատիկան յուրատեսակ կոդավորված լեզու է, որով կարելի է բացել բնության ոսկի գիրքը: Այնպես, ինչպես զարմանում ենք բանաստեղծական անակնկալ պատկերով, պիտի սովորենք զարմանալ նաև թվերի ներթաքույց խաղով, ուր լույս կա, գաղտնիք ու հրապույր: Նույնն է հրճվանքը, երբ բացում ենք նոր բանաձև՝ «Մաթեմատիկան ստեղծել է Աստված, հայտնագործել է մարդը. որտեղ՝ մաթեմատիկան, այնտեղ կշռույթը, ասել է՝ բանաստեղծութունը»,- հուշեցին դասախոսները:

Ձանձրալի կարող է լինել ամենուրեք: Մա՛րդն է, որ շունչ ու ոգի է արթնացնում, մեր երազները կարելի է գունավորել բանաձևերով: Զարմանքը միշտ կհարատևի. դա է գլխավորը՝ եզրահանգեցին ուսանողները:

Բոլորն այն կարծիքին էին, որ նման հանդիպումները պետք է դարձնել շարունակական, քանի որ առաջին հանդիպումից իսկ որսացին նրանց զարգացնող ու դաստիարակիչ նշանակությունը: Սա հաստատեցին մաթեմատիկոսներից՝ Արգինեն, Վարդուհին, բանասերներից՝ Կարլենը, Սյուզանը, Աստղիկը: Նրանք տուն տարան ոգևորիչ տրամադրություն, ուսուցչի արթնության իրենց անխառն բերկրանքը:

Բանասերների
նախաձեռնող խումբ

ՆԱ ՓԱՌԱԲԱՆԵՑ ՍԵՐՆ ՈՒ ՀԱՎԱՏԱՑԱՑ ՀՈՒՅՍԻՆ

Մանկավարժական համալսարանի ավագ դպրոց-վարժարանի հայոց լեզվի և գրականության ուսուցիչների նախաձեռնությամբ 10-12-րդ դասարանների ու հոսքերի սովորողների մասնակցությամբ ներկա եղանք արևմտահայ մեծ բանաստեղծ, հասարակական գործիչ Վահան Թեքեյանին նվիրված միջոցառմանը:

Ասմունքը երգի ու երաժշտության հետ համեմված՝ լսարանը լցրել էր թեքեյանական խոսքով, ոգով, հայրենիքի հանդեպ մեծագույն սիրո թեքեյանական երբեմնի խոստովանություններով: Նկատելի հուզմունք կար, որ մասնակիցների շուրթերից փոխանցվում էր մեզ՝ ունկնդիրներիս: Կարճ ժամանակահատվածում լսարանը լցվեց ջութակի, քանոնի, կիթառի և ուդի մեղեդիներով, թեքեյանական խոսքերով գրված երգերի ու պոեզիայի վսեմ հնչյուններով:

Մասնակիցները հմուտ ու վարժ արևմտահայերենով ներկայացրին արյունոտ եղեռնից պատահաբար փրկված պոլսահայ բանաստեղծի կենսագրությունն ու կյանքի տառապանքը: Օրհասական ու բարդ ժամանակաշրջանի և կյանքի քառուղիներում մաքառող բանաստեղծը տառապեց իր ժողովրդի համար, եղավ նրա բախտի ու ճակատագրի ուղեկիցը: Նա տեսավ «չարիքի հաղթանակը բարու նկատմամբ», տեսավ «կործանման անդունդին կանգնած ժողովուրդը» և հույսի երազները հոդս ցնդեցին…

Աշակերտներն անդրադարձան մեծ բանաստեղծի ազգային, մանկավարժական, խմբագրական, հասարակական գործունեությանը, տպագրած բանաստեղծական ժողովածուներին: Հայ մարդու և հայրենիքի պաշտամունքով լեցուն անհատն ապրեց իր ժողովրդի ողբերգությունը, կանգնեց նրա կողքին, նրա հետ տառապեց ու մեզ թողեց բանաստեղծական ժողովածուներ՝ «Հոգեր», «Հրաշալի Յարութիւն», «Սեր», «Կէս գիշերէն մինչեւ արշալոյս», «Սէր», «Հայերգութիւն» և «Տաղարան»:

«…Ես նորոգ հայրենիք չտեսա: Բայց իմ ժողովուրդը ուժեղանում է առասպելական հերոսի նման- …Անհայրենիք սփյուռքահայության միակ փրկությունը հայրենիքում հավաքվելն է… »:

Վահան Թեքեյանը «փառաբանեց հերոսականությունն» ու մինչև վերջ «որոնեց սիրո և գեղեցկության իդեալը, ձգտեց մարդկային հոգու կատարելությանը, փառաբանեց սերն ու հավատաց հույսին…»:

ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարանի տնօրեն Նաիրա Սաֆարյանն իր շնորհակալության խոսքը հղելով աշակերտներին՝ ասաց. «Դուք կարողացաք սահուն ու հրաշալի ասմունքել, մեզ փոխանցել Վահան Թեքեյանի պոեզիայի հմայքը: Կուզեի, որ այսուհետ նման միջոցառումներն ավելի շատ լինեին և ավելի մեծ լսարաններում»:

Տնօրենն առանձնահատուկ շնորհակալություն հայտնեց տղաներին, որոնց ակտիվությունն առավել հետաքրքիր ու հաճելի դարձրեց գրական ձեռնարկը՝ նրանց կերպարներով «իրական» դարձնելով Վահան Թեքեյանի ներկայությունը լսարանում:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գրքի շնորհանդես

Մանկավարժական բարձրորակ կադրերի պատրաստումը պայմանավորված է ոչ միայն առարկայի դասավանդման մակարդակով, դասի տեխնիկական հագեցածությամբ, այլև ժամանակակից դասագրքերի ու ձեռնարկների առկայությամբ: Առաջին անգամ մանկավարժական բուհերի Հատուկ կրթության ֆակուլտետների տիֆլոմանկավարժություն մասնագիտության ուսանողների համար հրատարակվել է գիրք՝ «Տեսողական օրգանի անատոմիա, ֆիզիոլոգիա և պաթոլոգիա» վերնագրով, որի շնորհանդեսն անցկացվեց Մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի հումանիտար ընթերցասրահում:

Գրքի հեղինակներն են ՀՊՄՀ պրոֆեսոր, բժշկագիտության ամբիոնի դասախոս Հակոբ Գրիգորյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, ՀՊՄՀ Հատուկ կրթության ֆակուլտետի պրոֆեսոր Ռոբերտ Ազարյանը, Ս. Վ. Մալայանի անվան բժշկական կենտրոնի տնօրեն, Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի աչքի հիվանդությունների ամբիոնի վարիչ, ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր ակնաբույժ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Մալայանը և նույն կենտրոնի բաժնի վարիչ, պրոֆեսոր Ելենա Մալայանը:

Հատուկ կրթության ֆակուլտետի դասախոսների և ուսանողների հետ հանդիպման էին եկել գրքի հեղինակները:

Ալեքսանդր Մալայանը անձնական գրադարանից 300 անուն գիրք՝ բառարաններ, հանրագիտարաններ, տեղեկատվական, մասնագիտական գրականություն, սիրով նվիրեց Մանկավարժական համալսարանի գրադարանին:

Գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցն ասաց, որ վերջին տարիներին գրադարանը համալրվում է միայն նվիրատվությունների միջոցով, և վերջին 10 տարիների ընթացքում գրադարանին նվիրել են շուրջ 700000 գիրք: Գրադարանի տնօրենը շնորհակալություն հայտնեց ակնաբույժ Ա. Մալայանին՝ ՀՊՄՀ գրադարանին մեծաքանակ գրքեր նվիրելու համար:

Հակոբ Գրիգորյանը ներկայացրեց գրքի ստեղծման պատմությունը՝ ընդգծելով, որ երկու մանկավարժի և երկու բժշկի հեղինակությամբ երկու տարվա մեջ ստեղծած գիրքը առաջին փորձն է, որտեղ ակնաբուժությունը և տիֆլոմանկավարժությունը մեկտեղվել են:

«Գիրքը գրվել է ոչ միայն բժշկագիտության, այլև մանկավարժագիտական ոլորտի մասնագետների համար: Այն լավ աշխատանք է՝ բաղկացած 8 գլուխներից, որոնք ավարտվում են հարցարաններով, թեստերով, օժանդակ գրականությամբ, իսկ ամենավերջում՝ նաև մասնագիտական բառարանով: Դասընթացին համապատասխան գրված ձեռնարկը մեծապես կնպաստի դասընթացի առավել դյուրին յուրացմանը ուսանողների կողմից:

Գրքի առաջին օրինակներն արդեն Մանկավարժական համալսարանի գրադարանում են, իսկ էլեկտրոնային տարբերակը կարելի է գտնել նաև համացանցում»,-ասաց Հակոբ Գրիգորյանը:

Հանրապետության գլխավոր ակնաբույժ Ալեքսանդր Մալայանը և նրա հայրը ակնաբուժության ասպարեզում տարբեր սերունդների են կրթել: Այդ մասին սիրով են հիշում ՀՊՄՀ ամբիոնների վարիչներ Ստեփան Գրիգորյանը և Ռոբերտ Ազարյանը, որոնք ևս անցել են Մալայանների դպրոցը:

«Այսօր ամբողջ աշխարհում հիմնախնդիր է դպրոցական կարճատեսությունը, և տիֆլոմանկավարժությունը պայքարում է այն կանխարգելելու համար: Այս գիրքը ևս մեկ քայլ է այդ ճանապարհին, որը կարող է նպաստել հարցի լուծմանը»,- ասաց պրոֆեսոր Ռ. Ազարյանը:

Ալեքսանդր Մալայանը Մանկավարժական համալսարանի ուսանողների հետ հանդիպում է առաջին անգամ, և անկեղծորեն արտահայտվում է՝ ուսանողների հանդեպ մեծագույն սեր է տածում: Արդեն 40 տարի աշխատում է որպես բժիշկ և դա համարում է իր կյանքի լավագույն շրջանը: Սա ընտանեկան մասնագիտություն է՝ անթաքույց բերկրանքով ասում է ճանաչված բժիշկը, հավելելով, որ 1937-ի զոհ դարձած պապի եղբայրը ակնաբուժության պրոֆեսոր, բժշկական գիտությունների դոկտոր, որ ապրում էր Թիֆլիսում, այս մասնագիտության ակունքներում էր կանգնած և նրանից է իր հորը փոխանցվել սերն այս մասնագիտության հանդեպ: Հորեղբոր գրադարանի գրքերը՝ 2800 կտոր, որ նվիրել է իր հորը, այժմ Մ. Հերացու անվան բժշկական համալսարանի գրադարանում է:

Ա. Մալայանը ուսանողների հետ կիսում է իր մտահոգությունը և ցավով նկատում, որ հասարակության մեջ գրքի հանդեպ սերն օրեցօր մարում է:

«Գիրքը ձեռքն առնելը, շոշափելը գերագույն հաճույք է և այն հնարավոր չէ համեմատել էլեկտրոնային գրականության հետ,-ասում է ակնաբույժը, ապա դիմում ուսանողներին,- շնորհակալություն, որ դուք կաք, դուք հայոց լեզվի ամրոցն եք Հայաստանում: Լինելով հայրենադարձ՝ ոչ մի տեղ ես հայերեն չեմ անցել, բայց ես ամենուր դասավանդել եմ հայերեն: Բարձր պահեք հայոց լեզուն, դա է մեր գոյության հույսը»:

«Դուք եք շարունակելու այն գործը, որ սկսել են ձեր դասախոսները: Եվ իմացեք՝ գիտելիքների հիմքը գիրքն է»,- ամփոփեց պրոֆեսորը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Հավատացեք հեքիաթին, ապրեք հեքիաթի մեջ...

Երեք օր մայրաքաղաք Երևանում գրքի իսկական տոն էր. անցկացվեցին գրքի ցուցահանդես-տոնավաճառներ, շնորհանդեսներ, վարպետության դասեր, բանախոսություններ, քննարկումներ, ընթերցումներ ու համերգներ:

Փառատոնի առաջին օրվա ծրագրում



ներառված էր նաև արձակագիր Ռուբեն Հովսեփյանի «Հեքիաթներ» պատկերազարդ գրքի շնորհանդեսը:

Հեքիաթների պատկերազարդ գիրքը հրատարակել է «Արևիկ» հրատարակչությունը, նկարչական ձևավորումն արել է Մոնի Հովսեփյանը՝ Ռուբեն Հովսեփյանի դուստրը: Ընթերցողներին ներկայացվել է շքեղ գույներով մի գիրք, որը կարող է դառնալ երեխաների մանկության, ինչու չէ, նաև մեծերի սիրելի գիրքը: Գրքում ընդգրկված 13 հեքիաթները բարությունն ու իմաստությունը մարմնավորող լուսավոր պատումներ են, որոնք աչք են շոյում հովսեփյանական պարզ ու գեղեցիկ ասելիքով՝ ընթերցողին տանելով դեպի մանկության մոլորակ:

Գիրքը հրաշալի նվեր է մանուկների համար՝ նկարազարդված փոքրիկների թեմատիկ նկարներից ընտրված լավագույն ստեղծագործություններով:

Գրողի ժպտադեմ թոռնիկ Նիկիտան իր ընկերների հետ փառատոնի այցելուներին ներկայացրեց «Շերեփուկն ու ձկնիկը» հեքիաթը՝ խոր ասելիքով ու բովանդակությամբ:

Հնարավոր չէ առանց հուզմունքի կարդալ այդ հեքիաթները: Ահա «Կարուսելի կանաչ ձին» հեքիաթը, ուր ազատության ձգտող կարուսելի ձիու երազանքը մի պահ իրականանում է. նա դառնում է հրեղեն ձի, սլանում դեպի իր ազատությունը, բայց շուտով մարդիկ նրան վերադարձնում են, կարուսելի ձանձրալի պտույտի մեջ բանտում:

Իր հարցազրույցներում գրողն առանձնակի ջերմությամբ է խոսել իր մանկության ու պատանեկության տարիների մասին՝ անելով խոր փիլիսոփայական ընդհանրացումներ. «Հեքիաթին հավատացողը չի վախենում խաբվելուց, այնինչ անհավատը վախենում է, և նրա կողքից աննկատ անցնում է հրաշքը»:

Այս գիրքը գրողի մանկության հեքիաթների վառ արտացոլանքն է՝ անմոռաց, աննկարագրելի գեղեցիկ ու մաքուր, ինչպես մանկան արցունքը, նաև գրողի պատգամը՝ հավատացեք հեքիաթներին, ապրեք հեքիաթի մեջ:

Այդ պատգամը թափանցիկ շղարշի նման անցնում է Ռուբեն Հովսեփյանի շատ ստեղծագործությունների միջով, սովորեցնում դիմակայել կյանքի դժվարություններին, սակայն, նաև մի պարզ ճշմարտությամբ. «Այս աշխարհում ամենից, ամենից դժվար բանը հեքիաթն իրականություն դարձնելն է»:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Մեր մրցանակակիրը

Նոյեմբերի 25-26-ը Երևանի «Գևորգ Բուդաղյան» արվեստի դպրոցում անց է կացվել «Մոցարտ» միջազգային մրցույթը, որին մասնակցել են Հայաստանի մարզերի և Երևան քաղաքի մի շարք դպրոցների աշակերտներ, ինչպես նաև Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանողներ և շրջանավարտներ, արտերկրից ժամանած երաժիշտներ:



Ինչպես տեղեկացանք դասախոս Սևադա Շհոյանից, Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնի ուսանող Սերյոժա Երիցյանը 21-25 տարիքային խմբում գրավել է 1-ին մրցանակային տեղը. նա կատարել է Լազր Սարյանի «Սերենադ» ստեղծագործությունը՝ փոխադրված կլարնետի համար (Էդվարդ Բաղդասարյան «Սոնատ կլարնետի համար»):

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

ԱՇԱԿԵՐՏԻ ՀՈԳՈՒ ԼՈՒՅՍԸ

Կրթության արվեստի ամբողջ գործընթացի շարժիչն ու ղեկավարը ուսուցիչն է՝ մանկավարժը: Իսկ ո՞վ է մանկավարժը: Այդ նա է, որ կապում է ժամանակներն իրար և այսօրվա էստաֆետը հանձնում գալիքին: Բառարանում կտեսնենք՝ մանկան դաստիարակության մասնագետ, կրթություն տվող: Իսկ «կրթել մի երեխա», ինչպես կնշեր հայ անվանի գրող և մանկավարժ Ղ. Աղայանը, «կնշանակե կրթության միջոցով տրամադրել նորան գովանի բնավորություն ստանալու և ինքնակրթությամբ մոտենալու այն կատարելությանը, որ վայել է յուր բնավորությանը»:

Սա պատահական խոսք չէ, այլ ուսուցչի առաքելության խորությունը բացահայտող ուղու սկիզբ: Այդ ուղու մեկնարկը մենք՝ ուսանողներս, տալիս ենք մանկավարժական պրակտիկայի շրջանակում:

Բանասիրական ֆակուլտետի 4-րդ կուրսը նվիրումով փակեց իր պրակտիկայի օրագրի վերջին էջը՝ արդեն դասամատյաններ բացելու հեռանկարով: Ամփոփիչ պրակտիկան լիովին տարբերվում էր նախորդ փուլերից, քանզի այս փուլն էր, որ բացահայտեց մեր ներուժն ու ճշգրիտ ուղի ընտրելու համոզում տվեց: Հնարավորություն տվեց շփվելու ոչ միայն աշակերտների, ուսուցիչների, այլ ծիծաղելի կթվա, բայց կուրսընկերների հետ ևս (կրթական գործընթացում երբեմն չես հասցնում ճանաչել միևնույն լսարանում նստած քո համակուրսեցուն): Միմյանց ճանաչելով է, որ կրթեցինք՝ կրթվելով մեր գործունեության որոշիչ 6 շաբաթներում: Այս ընթացքում օգտվեցինք մասնագիտական գրականությունից, մեթոդական ձեռնարկներից՝ փորձելով աշակերտներին հնարավորինս դյուրին մատուցել տրվելիք նյութը: Բայց հասկացանք նաև, որ հաճախ պետք չէ հարել մանկավարժական որևէ ճշգրիտ մեթոդի. մտքի ճախրանքը չպետք է օղակել ինչ-որ տեսություններով: Յուրաքանչյուր ուսուցիչ



պետք է ունենա իր սկզբունքներն ու մոտեցումները և անվարան օգտագործի դրանք: Լավագույն մեթոդը, ըստ իս, որին պետք է տիրապետի ցանկացած ուսուցիչ, սիրո մեթոդն է: Այդ մեթոդն է, որ երբեք չի կորցնի իր արդիականությունը. չէ՞ որ յուրաքանչյուր աշխատանք սեր ու նվիրում է: Եթե սիրես մանուկներին, ապա սիրով ու հոգով կմոտենաս նրանց կրթությանն ու դաստիարակությանը, նրանք էլ իրենց հերթին կտան քեզ իրենց ջերմությունը, կապրեցնեն ու ևս մեկ անգամ կհամոզեն՝ ափսեդ ճիշտ ես ընտրել: Սրանք պատահական ընտրված կամ գրքերից առնված արտահայտություններ չեն: Ցանկացած բառի հետևում մեկ իրավիճակ է, մեկ պատմություն ու դպրոցական առօրյայի մի պատառիկ: Առօրյա, որ մեր ներկայությամբ որոշ ուսուցիչների անդորը խաթարեց, որոշների գործը հեշտացրեց, որոշների խեթ հայացքները մեզ շնորհեց, բայց եղան և ուրիշներ, որ այդ առօրյայում ուղի գտան՝ լինելու մեզ ուղղորդող ձեռքերը: Բայց առավել կարևոր էին այն ձեռքերը, որոնք 45 րոպեների ընթացքում ճեղքում էին օդն ու նետվում պատասխանելու, հարց ուղղելու կամ գնահատական ապահովելու: Իսկ գնահատական ապահովելու ճանապարհն անցնում էր հաճոյախոսությունների ու սիրաշահումների արահետներով: Բայց կային և այնպիսիները, որոնք ոչ այնքան գնահատականի, այլ անկեղծ, ընկերական վերաբերմունքի համար «հոգի կուտային»: Պակաս չեղան նաև ապագա ուսուցչուհիներին իրենց մանկական պարզությամբ և վերաբերմունքով սեր բացատրողները: Այդ կլիներ բանաստեղծության, համատեղ լուսանկարի, դասին մշտապես պատրաստ լինելու մղումով, թե ակրոստիկոս հորինել-նվիրելով, էական չէր. այստեղ կարևորվում են վաստակած սերն ու սպասված հարգանքը: Տեղին է կրկին հիշատակել Հայ Անդերսենի՝ Ղ. Աղայանի խոսքերից մեկը. «Ով չգիտե, որ աշակերտը, ատելով վարժապետին, ատում է նաև ուսմունքը, որքան այդ օգտակար լիներ, և ընդհակառակն, պատվելով վարժապետին, սիրում է նորա դասերը..»:

Եվս մեկ ապացույց, որ սիրո մոտեցումն է դասավանդման ճանապարհին թույլ տալիս գրանցել անակնկալ հաջողություններ և բացահայտել աշակերտի կարողություններն ու տաղանդը, որ սքողված էին և հայտնի դարձան շնորհիվ մեզ: Տաղանդաշատ փոքրիկներից մեկը հեքիաթներ էր գրում: Սփյուռքահայ գրող և մանկավարժ Հակոբ Օշականն իր սաներից մեկին ասել է.

«-Մտիկ ըրէ, տղա՛ս: Կան մեծ լեռներ եւ կան պզտիկ լեռներ: Մեծ լերան մէջ ենթադրէ որ կայ մեծ քանակութեամբ ոսկի, պզտիկ լերան մէջ՝ քիչ քանակութեամբ: Արդ՝ մեծ լերան շատը կրնա՞յ պատճառ ըլլալ, որ պզտիկին քիչը դադրի ոսկի ըլլալէ, կորսցնէ իր ոսկեղէն արժեքը:

Կո՛ւր առայժմ քու քիչ ոսկիդ, շատին մասին մտածելու դեռ ժամանակ ունիս-...»:

Մենք այն առաքյալներն ենք, որոնք աշակերտների հոգին կլցնեն լույսով, այն լույսով, որ թույլ կտա տեսնել ու մշակել իրենց «լերան ոսկին»՝ ընդսմին սովորեցնելով բնույթին ու ներքին ձայնին հավատարիմ մնալու արվեստը:

Աննա ԴԱՎԹԱՆ
Բանասիրական ֆակուլտետ,
4-րդ կուրս

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարան մշտապես այցելում են տարբեր տարիքի դպրոցականներ: Տարիքային յուրաքանչյուր խմբի համար էքսկուրսիայի անցկացման ձևերը տարբեր են՝ ճանաչողական, մասնագիտական կողմնորոշման, ինչպես նաև կրթական ծրագրերի հիման վրա անցկացվող խաղ-վիկտորինաներ:

Այս տարվա նոյեմբերի 29-ին թանգարանի հերթական հյուրերն էին Խաչատուր Աբովյանի անվան N 2 դպրոցի աշակերտները, որտեղ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սոֆի Թորգոմյանի ղեկավարությամբ իրենց ուսումնական պրակտիկան են անցկացնում Բանասիրական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողները:

Դպրոցի 8-րդ դասարանի աշակերտներն ուսանողների հետ այցելեցին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարան:

Թանգարանում դպրոցականները ստացան տեղեկություններ համալսարանի պատմության և մասնագիտությունների մասին, հարստացրին Խաչատուր Աբովյանի վերաբերյալ իրենց գիտելիքները: Դպրոցականների հետ անցկացվեց «Ճանաչենք Աբովյանին» խաղ-վիկտորինան, որից հետո վերջինները ներկայացրին մեծ լուսավորչի իմաստուն խորհուրդներից, ինչպես նաև հայազգի այլ մեծերի խոսքերը Խաչատուր Աբովյանի մասին:

Ամփոփելով՝ կարելի է վստահորեն ասել, որ դպրոցականների օրը կրթական առումով հագեցած էր և հետաքրքիր: Այցելությունները տպավորված էին հատկապես Աբովյանի տեսաձայնային պատկերով, որի միջոցով ունկնդրեցին Մեծ մանկավարժին՝ իրենց հոգում ամրապնդելով սերը հայրենքի, կրթության, մայրենի լեզվի նկատմամբ: Տպավորությունների գրքում իրենց գոհունակությունը հայտնելով՝ դպրոցականները խոստացան կրկին այցելել Մանկավարժական համալսարան:

Կարինե ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
ՀՊՄՀ թանգարանի գիտաշխատող

ՃԱՆՈԹԱՑԱՆ ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ

Նոյեմբերի 17-ին ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում միջին դպրոցական և բարձր դասարանների աշակերտների համար անցկացվեց կարևոր ճանաչողական էքսկուրսիա և դասախոսություն՝ «Մոսկվայի հայկական գանձատուն. արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի ստեղծման պատմությունը» թեմայով: Դպրոցի տնօրեն,

մանկավարժական գիտությունների թեկնածու Շողիկ Փահլևանյանն իր շնորհակալական խոսքը հղեց ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վարդան Տողանյանին նման հրաշալի հնարավորություն ընձեռելու համար:

ՀՀ դեսպանության մամուլի ծառայության աշխատակից, քաղաքագիտության թեկնածու Արամ Ոսկանյանի հետաքրքիր տեղեկատվական դասախոսությունից հետո վերջինիս գլխավորությամբ կազմակերպվեց էքսկուրսիա նախկին Լազարյանների կալվածատնով, որը հիմնադրվել է 1815 թվականին, ուր այժմ գտնվում է Հայաստանի Հանրապետության դեսպանությունը: Ի դեպ նշենք, որ ՌԴ-ում ՀՀ դեսպանությունը գտնվում է իր երկրի անունը կրող փողոցի վրա՝ Հայկական նրբանցք, 2: Սա բացառիկ երևույթ է:

Էքսկուրսիայի ընթացքում աշակերտները ծանոթացան և ուսումնասիրեցին Լազարյան ճեմարանի հիմնադրման պատմությունը, որը սկիզբ է առնում դեռևս Իվան Լազարևից, ով իր միջոցները որպես ժառանգություն թողեց հայկական դպրոց հիմնադրելու նպատակով (1800 թ): 1814 թվականի մայիսի 10-ին տեղի ունեցավ դպրոցի նոր շենքի հիմնադրման հանդիսավոր արարողությունը: 1815 թվականի մայիսի 12-ին դպրոցն ընդունեց իր առաջին սաներին: Ուսումնական ծրագիրը ներառում էր քառամյա կրթություն: 1827 թվականի դեկտեմբերի 26-ին դպրոցն անվանվեց Լազարյանների արևելագիտության ինստիտուտ:

Երեսուներկու տարի անընդմեջ Լազարյան ճեմարանի ավանդույթները շարունակում է ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցը (1988 թվական):

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց, Մոսկվա

Դեկտեմբերի 1-ը ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օրն է

Դեկտեմբերի 1-ը ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օրն է: Օրվա առթիվ Մանկավարժական համալսարանի Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշպանության ամբիոնը կազմակերպել էր միջոցառում, որին հրավիրվել էին ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի բժիշկներ:

Ներկաները դիտեցին տեսանյութ, որը պատրաստել էին համալսարանի ուսանողական խորհրդի STUDENT TV-ի (խմբագիր՝ Նոնա Խաչատրյան) ուսանողները: Նախապես հայտարարվել էր նկարների մրցույթ և անցկացվել էլեկտրոնային հարցում՝ տարբեր ֆակուլտետների ուսանողներից ստանալու պատասխաններ՝ արդյո՞ք առողջ տեսք ունեցող մարդը կարող է լինել ՄԻԱՎ-ՁԻԱՀ վարակակիր: Հետաքրքիր էր, որ 1251 հարցված ուսանողների 60 %-ը տվել էր ճիշտ պատասխան՝ այո:

Միջոցառումն ինքնին իրազեկման և տեղեկատվության տարածման, հանուն առողջության բոլորի ջանքերը միավորելու ակցիա էր:

Մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողներ Արաքսյա Լոբոդիչը և Տաթևիկ Սայադյանը տեսապատկերների միջոցով հանգամանորեն ներկայացրին ՁԻԱՀ-ի ծագման պատճառները, ընթացքը և գոյություն ունեցող վարկածները, անդրադարձան ՄԻԱՎ վարակի ընթացքին ընդհուպ մինչև ՁԻԱՀ-ի փուլը, փոխանցման հիմնական ուղիներին ու ռիսկային խմբերին:

ՁԻԱՀ-ը բժշկական և սոցիալական հիվանդություն է: Աշխարհում տարածված վարկածներից մեկն այն է, որ վարակն առաջացել է կապիկներից: ՄԻԱՎ-ը մարդու իմունային անբավարարության վիրուսն է, որի վերջնական փուլը ՁԻԱՀ-ն է: Այն կարող է գոյություն ունենալ միայն կենդանի օրգանիզմում:

Ուսանողները ներկայացրին նաև կանխարգելման ռազմավարությունը՝ դրանց վերաբերյալ տեղեկատվության, ՄԻԱՎ-ի վարակի նվազեցման ուղղությունները և վարակի փոխանցման վտանգից խուսափելու պայմանները:

Ըստ վիճակագրության՝ մեր հանրապետությունում 1988-2019 թվականներին գրանցվել է 3694 դեպք: Առաջին տեղում

Երևանն է, ապա Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արարատի մարզերը: Շատ դեպքերում դրանք միգրացիայի հետևանք են:

Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշպանության ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր Նարինե Սահակյանը խոսեց թեմայի կարևորության մասին, ընդգծեց ՁԻԱՀ-ի հանրապետական կենտրոնի կոլեկտիվի կարևոր աշխատանքը ՄԻԱՎ-ՁԻԱՀ-ի բացահայտման և կանխարգելման ուղղությամբ, անդրադարձավ «ՁԻԱՀ և վարքագիծ» ամսագրին՝ որպես վերոհիշյալ հարցերի մասին գիտատեղեկատվական կարևոր հարթակի:

Ամբիոնի վարիչն ընդգծեց ուսանողների իրազեկվածության մակարդակը որպես կարևոր օղակ և հորդորեց բոլորին ակտիվ լինել տեղեկատվության տարածման գործում:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում ապրում է 3500 ՄԻԱՎ-ՁԻԱՀ վարակակիր: Հիվանդության կանխարգելման ուղղությամբ մեծ աշխատանք է կատարում Երևանի Ավան համայնքի Աճառյան 2 հասցեում գտնվող ՄԻԱՎ-ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնը: Լեփ-լեցուն դահլիճում կենտրոնից հրավիրված բժիշկ-վիճակագիր Լիլիթ Հովհաննիսյանը և բժիշկ-համաճարակաբան Հեղինե Հովակիմյանը ուսանողներին և դասախոսներին ներկայացրին հիվանդության մասին համապարփակ տեղեկատվություն, պատասխանեցին նրանց հարցերին:

«Աշխարհն այսօր թիրախավորել է մեկ նպատակ, որ ՄԻԱՎ-ով վարակված մարդկանց գոնե 90 %-ն իմանա իր վարակի մասին, որպեսզի բուժվի: Թեև վարակակիր հիվանդը դեռևս չի բուժվում կամ ապաքինվում, ռետրոդեղամիջոցի կիրառմամբ վիրուսների մակարդակն ընդամենը նվազեցվում է մարդու օրգանիզմում, որպեսզի նա շրջապատի համար դառնա նվազ վտանգավոր»,-ասում է Լիլիթ Հովհաննիսյանը:

Ըստ վիճակագրության՝ Հայաստանում վարակակիրների 60 %-ը տղամարդիկ են:

«Մենք կիրառում ենք այդ դեղերը որպես բուժման մեթոդ,-ասում է բժիշկ-համաճարակաբան Հեղինե Հովակիմյանը: -Դեղերն անմիջականորեն ազդում են վիրուսների վրա, և վերջինները դադարում են զարգանալ արյան մեջ: Ցավոք, այսօր չկա նշված հիվանդության արմատական բուժում, առայժմ հնարավորինս կանխարգելվում է զարգացման ընթացքը, սակայն ՄԻԱՎ-ի վերջին՝ ՁԻԱՀ-ի փուլում հիվանդը մահանում է»:

Բժիշկ Հ. Հովակիմյանը վստահեցնում է, որ հիվանդներն այդ դեղերը պետք է օգտագործեն ամբողջ կյանքի ընթացքում: Բժիշկների խնդիրն է՝ հասնել վիրուսի չհայտնաբերվող վիճակին և նրան, որ ՄԻԱՎ-ը չվերածվի ՁԻԱՀ-ի:

Վերջում ամբիոնի վարիչ Նարինե Սահակյանը շնորհակալություն հայտնեց ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի բժիշկներին՝ միջոցառմանը մասնակցելուն արագ արձագանքելու և հանգամանալի տեղեկատվություն տալու համար, իսկ ակտիվ ուսանողներին շնորհակալագրեր հանձնեց:

«Տեղեկատվական, կրթական աշխատանքը խիստ կարևորվում է ՄԻԱՎ-ՁԻԱՀ-ի դեմ պայքարում: Եղեք ակտիվ»,-ուսանողներին հորդորեց ամբիոնի վարիչը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Անին՝ հեռու և մոտ

ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետի առաջին կուրսեցիների համար կազմակերպվեց ճանաչողական այց դեպի Անի, Երերույք և Թալին: Մեր կյանքի հետաքրքիր ու հազվագյուտ օրերից մեկն էր դա. տեսանք Անին, ավելի ճիշտ՝ տեսանք երբեմնի հազար ու մի եկեղեցիներ ունեցող Անիի «ուրվականը»: Դժվար է ասել՝ ինչ զգացողություններ ունեցանք. Անին տեսնելով՝ ընկճվում ես, հուզվում, կոտրվում, բայց դա կարճ է տևում, որովհետև երկար նայելով Անիին, հասկանում ես, որ նա հույսով, հավատով է քեզ նայում, որ նա հպարտ է նրանով, որ իր նախկին տերերը հայեր են եղել: Եվ ամեն մի ուխտավորի այցով նա կարծես տեսնում է իր փրկչին, որն ազատելու է իրեն թուրք հրոսակներից:

Ի՞նչ է սպասվում Անիին: Նրա ճակատագիրը մտահոգում է բոլորիս, նրա ավերակները մեր պատմության ու մշակութային արժեքների կարևոր մասն են կազմում, և դրանց ճանաչումն ու պահպանումն անչափ կարևոր է մեզ համար, որովհետև Թուրքիան ոչ միայն անհանդուրժողական է, այլև քողարկում է նրա հայկական պատկանելությունը, անգամ փորձում է ոչ միայն Անիում եղածը թուրքական արժեք դարձնել, այլև նրա անունը փոխել Անը, որը թուրքերեն «հուշ» է նշանակում:

Ի՞նչ պետք է անել: Լուծումը մեկն է. սովորել, լավ սովորել, պիտանի մարդ և մասնագետ դառնալ: Միգուցե մի օր կարողանանք վերադարձնել այն, ինչ մերն է, հայկական է...

Շնորհակալություն կազմակերպիչներին՝ մեզ ողջ ընթացքում ուղեկցող, պատմության փաստերը մեզ հանգամանորեն ներկայացնող ու վերլուծող մեր ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանին, Ավետիս Հարությունյանին և էքսկուրսավարին: Շնորհակալություն, որ մեր մեջ անսահման հայրենասիրություն ու սեր եք ներարկում առ Հայրենին:

Մոնիկա ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Պատմության և իրավագիտության ֆակուլտետ
պատմություն մասնագիտության 1-ին կուրս

ՊՐԱԿՏԻԿԱ՝ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՐԹԱԿ

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի բակալավրիատի առկա ուսուցման աշխարհագրություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողները 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի մանկավարժական պրակտիկայի երրորդ՝ ամփոփիչ գնահատող փուլը անց են կացրել Երևանի N 46 ավագ դպրոցում՝ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Արմեն Աջամօղլյանի ղեկավարությամբ: Պրակտիկայի ընթացքում կազմակերպել են մի շարք բազմաբնույթ միջոցառումներ, որոնք պարակտիկայի ընթացքը դարձրել են առավել հետաքրքիր թե՛ ուսանողների, թե՛ աշակերտների համար:

Հոկտեմբերի 17-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետում հայտարարվել էր բաց դռների օր: Համալսարան այցելեցին նաև N 46 ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտները՝ իրենց մոտ պրակտիկա անցնող ուսանողների և դպրոցի աշխարհագրության ուսուցչուհի Լիլիթ Ղազարյանի ուղեկցությամբ: Աշակերտները ծանոթացան ֆակուլտետի գիտաուսումնական գործունեությանը, մասնակցեցին գործնական բաց դասերի կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության լաբորատորիաներում:

Խաչատուր Աբովյանի 210-ամյակի կապակցությամբ կատարեցինք այց ՀՊՄՀ թանգարան, որտեղ աշակերտները ծանոթացան գրողի կյանքին, ստեղծագործական և աշխարհագրական գործունեությանը, նաև ծանոթացան համալսարանի պատմությանը:

Աշակերտները տպավորված էին, լի հետաքրքիր զգացողություններով, շատերը դպրոցն ավարտելուց հետո որոշեցին դիմել Մանկավարժականի:

Նոյեմբերի 7-ին պրակտիկայի շրջանակներում 10-րդ դասարանի աշակերտների համար կազմակերպվեց այց Մերձավանի ագրոօդերևութաբանական կայան:

Օդերևութաբանական կայանը բաղկացած էր օդերևութաբանական հրապարակից, որտեղ տեղադրվում է գործիքների մեծ մասը, ծառայողական շենքից, որտեղ գտնվում են բարոմետրերը, հեռաչափական (դիստանցիոն) գործիքների գրառող մասերը, և կատարվում են դիտարկումների մշակումները: Տեղում ծանոթացանք չափիչ գործիքներին, կատարվեցին դիտարկումներ աշակերտների կողմից, ինչը, անշուշտ, նպաստեց նրանց գիտելիքների հարստացմանը:

Ացելեցինք նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տաճար: Շրջայցը բավականին հետաքրքիր և բովանդակալից էր: Այցի նպատակն էր աշակերտների մեջ ձևավորել աշխարհագրական մշակույթ, հայրենագիտական, հայրենասիրական, մշակութային դաստիարակություն:

Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Արմեն Աջամօղլյանի ղեկավարությամբ իրականացվեց շրջայց՝ Երևան-Ապարան-Հառիճ-Արթիկ-Գյումրի-Թալին-Երևան երթուղով:

Առաջին կանգառը Հայոց այբուբենի հուշարձանն էր՝ Ապարան-Երևան ավտոմայրուղու աջ կողմում, Ապարանի և Աշտարակի վարչական սահմանագլխին, Արագած լեռան արևելյան լանջին: Այն կառուցվել է 2005 թվականին հայոց գրերի ստեղծման 1600-ամյակի առթիվ:

Հաջորդ կանգառը միջնադարյան եկեղեցական համալիր Հառիճավանքն էր, որը նախկինում նաև անվանվել է Ղփչաղավանք: Այն հնագույն միջնադարյան հայկական վանքերից է: Ամենահին շինությունը 7-րդ դարում կառուցված Ս. Գրիգոր եկեղեցին է: Նրան կից կան 13-րդ դարում կառուցված երկհարկանի աղոթարաններ: Այնուհետև այցելեցինք Հառիճի VII դարից հայտնի դպրոցը, որն այժմ վերաբացվել է և հայտնի է որպես «Թրբանճյան ընծայարան»: Ծանոթացանք ընծայարանի պատմությանը, սաների առօրյային և նիստուկացին:

Մեր շրջայցի հաջորդ կանգառը Արթիկի ելակի հիդրոպոնիկ ջերմոցն էր: 2018 թ-ին, Արագածի լեռան ստորոտում, շրջակա լեռնաշղթայի էկոլոգիապես մաքուր գոտում, 1700 մ բարձրության վրա, շահագործման է հանձնվել ելակի աճեցման համար նախատեսված ջերմոցային տնտեսություն՝ 3 հա տարածքով: Ջերմոցը կառուցվել է ժամանակակից, միջազգային չափանիշներին համապատասխանող տեխնոլոգիաներով, որի մատակարարարն է համաշխարհային ճանաչում ունեցող ֆրանսիական «Richel» ընկերությունը:

Աշակերտների և ուսանողների համար հետաքրքիր ու հաճելի էր շրջայցը Գյումրի քաղաքում, մասնավորապես Սև բերդ ամրոց, որը կառուցվել է 1834 թվականին: Անիի ստորգետնյա կառույցների նման Սև բերդի համար էլ ստորգետնյա ուղիներ են կառուցել և բերդից ճանապարհներ են եղել դեպի ներկայիս Մայր Հայաստան հուշարձանը և Կարմիր բերդը: Կենտրոնական մասում «Ալեքսանդրապոլ» ամրոցն է՝ 3 դարպասներով, կենտրոնում՝ Սուրբ Ալեքսանդրա եկեղեցու հատակագիծն է և Ալեքսանդրապոլի ընդհանուր պաշտպանական համալիր հանդիսացող հարավային և հյուսիսային բերդերը: Հյուսիսային կողմում Կարմիր բերդն է: Հին Ալեքսանդրապոլի հատվածում տեղակայված է 102-րդ ռուսական ռազմաբազան:

Կատարեցինք քայլերթ-շրջայց Գյումրու Արվեստի և արհեստի քաղաքի, հումորի և սրամտության քաղաքի, Հայաստանի հյուսիսային մայրաքաղաքի, հայրաքաղաքի փողոցներով, որտեղ ծանոթացանք քաղաքի կոլորիտային տեսարաններին, հնի և նորի միախառնումին:

Գյումրին՝ հազարամյակների խորքից եկած պատմական քաղաք է, որը եղել է արհեստների ու արվեստների ծննդավայրը: Այնտեղ են ծնվել, մեծացել մշակույթի փառահեղ ու մեծանուն գործիչներ՝ նկարիչ Մարտիրոս Սարյանը, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը, տիեզերագնացներ Վալենտինա Տերեշկովան, Նիկոլաև Անդրիանը, շախմատիստ Տիգրան Պետրոսյանը, մարշալ Հովհաննես Բաղրամանը, ավիակոնստրուկտոր Արտյոմ Միկոյանը, Հայաստանի ազգային պատկերասրահի նախկին տնօրեն Շահեն Խաչատրյանը, բարերարներ Հովհաննես Օյունջյանը, Սիմոն Եզնիկ Բալյանը, Ջոն Հանթսմանը, բարերար, երգիչ և բանաստեղծ Շառլ Ազնավուրը:

Այնտեղ մենք տեսանք օպերայի առաջին շենքը, օժիտի տունը, հայտնի հայկական ֆիլմերի նկարահանման վայրերը, բերդերը, թանգարանները ու շատ այլ հետաքրքիր բաներ, որոնց համար արժեր գնալ Գյումրի:

Սուրբ Աստվածածին Մայր Եկեղեցի կամ Սուրբ Յոթ Վերք եկեղեցին այցելելուց և պատմությունն իմանալուց հետո քայլեցինք դեպի Թատերական հրապարակ, որտեղ էլ ավարտեցինք մեր օրը...

Գյումրին իր ավանդույթներով, կենցաղով և հոգեբանությամբ՝ նաև բարբառով, սրամտությամբ, հումորով, յուրահատուկ դարձվածքներով ստեղծել է յուրատեսակ մի միջավայր, որը ծնունդ է տվել զվարճախոսություններին, որին ծանոթացանք անմիջական շփում ունենալով տեղացիների հետ: Այնտեղ կա բազմազանություն առանց բթացնող բազմության, ամեն դասախոսությունն իրադարձություն է, ամեն նոր սրճարանը՝ երկար սպասված:

Գյումրին ամեն ինչում է եզակի, այնտեղ ամեն ինչն է վերաիմաստավորվում և ներկայացվում նորովի: Ցավոք, մեկ օրը բավական չէր Գյումրիին ամբողջությամբ ծանոթանալու համար: Մեր տպավորությունները և այնտեղ ապրած զգացումները մեզ ստիպում են նորից վերադառնալ՝ կրկին ու կրկին բացահայտելու մեր հայրաքաղաքը...

Պրակտիկայի ամբողջ խմբով հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը պրակտիկայի ղեկավար Արմեն Աջամօղլյանին՝ նման հիանալի և բովանդակալից օր կազմակերպելու համար:

Նոյեմբերի 20-ին Երևանի N 46 ավագ դպրոցում, որտեղ անցնում էր ուսանողների պրակտիկան, կազմակերպվեց արտադասարանային ինտելեկտուալ խաղ-միջոցառում՝ «60 րոպե աշխարհի շուրջ» խորագրով: Միջոցառման ծրագիրը կազմել էին պրակտիկանտները խմբի ղեկավարի և աշխարհագրության ուսուցչի օժանդակությամբ: Միջոցառմանը մասնակցում էին Երևանի № 46 ավագ դպրոցի տնտեսագիտական, հումանիտար և բնագիտական հոսքի 10-րդ դասարանի աշակերտները:

Ինտելեկտուալ խաղ-միջոցառման կանոններով աշակերտները բաժանվել էին 4 խմբի՝ ըստ դասարանների յուրաքանչյուր խմբում՝ 3 աշակերտ: Ինտելեկտուալ խաղ-միջոցառումը բաղկացած էր 3 փուլից: Առաջին փուլի համար ներկայացված էին թեմաներ Հյուսիսային և Հարավային Ամերիկայից, Աֆրիկայից, Եվրասիայից, Ավստրիայից, Անտարկտիդայից, Հայաստանի Հանրապետությունից, Իտալիայից, Ռուսաստանի Դաշնությունից, Հայրենագիտությունից և Արեգակնային համակարգից:

Երկրորդ փուլի համար նախատեսված էր տրամաբանական հարցերի շարք: Երրորդ փուլն ամփոփիչ և վերջին փուլն էր, որ կրում էր ընդհանուր ճանաչողական բնույթ:

Աշակերտները լավ էին պատրաստվել խաղ-միջոցառմանը: Երրորդ փուլի ավարտին ամփոփվեցին արդյունքները, և հաղթող խումբ ճանաչվեց տնտեսագիտական հոսքի 10-րդ դասարանը: Բոլոր խմբերը պատվոգրեր ստացան և նվերներ:

Ինտելեկտուալ խաղի միջոցով աշակերտների մեջ սերմանեցինք հետաքրքրություն դեպի աշխարհագրությունը, փորձեցինք արթնացնել հետաքրքրություն արվեստի հանդեպ, հարգել, ճանաչել և լսել Հայաստանից հեռու ապրող և ստեղծագործող մեծանուն մարդկանց: Աշակերտները ոգևորված էին՝ պայքարում էին հաղթանակի համար՝ «Մեկը բոլորի, բոլորը մեկի համար» կարգախոսով:

Միջոցառման ավարտին պրակտիկա անցնող ուսանողները դպրոցին նվիրեցին գլոբուս՝ հուսալով, որ դպրոցն առաջիկայում կունենա աշխարհագրության կաբինետ:

«Ճանապարհորդությունը» նպատակային էր և բովանդակալից, նաև հիշարժան բոլորի համար: 60 րոպեի ընթացքում ներկաները երևակայական պտույտ կատարեցին ամբողջ մոլորակով:

«Կրթությունն ամենահզոր զենքն է, որը դուք կարող եք օգտագործել աշխարհը փոխելու համար». Նելսոն Մանդելայի այս գաղափարի շուրջ համախմբվելով էին աշխարհագրության բաժնի առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողները կազմակերպել միջոցառումը:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի աշխարհագրություն մասնագիտության 4-րդ կուրս

Գյուղի հեռվից երևում է պապիս տունը, որ տարվա բոլոր եղանակներին տաք է, ջերմ, գրկող: Սիրում եմ այդ փոքրիկ, բայց ուսերին մեծ բեռ վերցրած տունը: Գյուղի փողոցներն ասֆալտապատ են. գյուղը մոտեցնում են քաղաքի՞ն, թե՞ քաղաքն են մոտեցնում գյուղին. իսկական, ապրող մարդիկ գյուղում են.

-Ոտքդ հողից չպիտի կտրվի, հողն է քոնը, թե չէ ասֆալտն ի՞նչ է, -ասում է պապս: Եվ գյուղի ասֆալտը վերջանում է պապիս տան վերին փողոցում. պապս չի թողել, որ «քաղաքացի» ասֆալտը մոտենա իր տանը: Ու երբ ես էլ եմ ոտք դնում այդ մի կտոր հողին, հասկանում եմ պապիս ու նրա ցավը (չգիտեմ՝ մինչև վերջ հասկացա՞ պապիս, թե՞ ոչ):

-Պա՛պ,- ձայն եմ տալիս՝ դուռը բացելով:

-Գնաց դաշտ,- ասում է զարմուհիս՝ ինձ ընդառաջ գալով,- քիչ հետո կգա, նե՛րս արի:

Մինչ մտքով վիճում էի պապիս հետ, նա ներս մտավ.

-Էս ո՞ր քամին է քեզ բերել մեր կողմերը,- կարոտած համբուրելով ճակատս՝ ասում է պապս:

Ուժեղ գրկում եմ նրան. ասես մի հազար տարի չէի տեսել:

Մինչ նա կլվացվեր, ես ու զարմուհիս սեղան գցեցինք:

-Արի՛, արի՛ մի բաժակ խմենք իրար հետ,- կանչեց պապս:

-Խմենք,- անմիջապես ասում եմ ես: -Ո՞ւմ կենացը:

-Էս հողի կենացը, որ էս տարիքում մեջս դեռ ուժ կա, գյուղի, գյուղացու կենացը, - ասում է ու խմում:

-Երկրորդը,- բաժակները լցնելով՝ շարունակում է նա,- քո կենացը, որ միշտ ժամանակ չունես:

-Պա՛պ, - ինչ-որ արդարացումներ եմ փնտրում, բայց բառերս կորել են:

-Բա ե՞րբ ես ամուսնանում,- թեման արագ շրջանցելով, հացը մանրացնելով և ուշադիր պատասխանի սպասելով՝ հարցնում է նա:

«Նորից սկսվեց»,- մտածում եմ:

-Չգիտեմ, պա՛պ,- կարճ կտրում եմ խոսքն ու ուշադիր սեղանին նայում, իբրև թե բան եմ որոնում:

-Ժամանա՛կ գտիր սիրելու համար, սրտով սիրած մարդ ամեն օր չի պատահի,-հետո խոր շունչ քաշեց ու շարունակեց,- գիտե՞ս՝ինչքան քիչ սիրեցի տատիդ. անաստվածը շուտ գնաց,- ձեռքն օդում թափ տալով ու բաժակը լցնելով՝ ասաց պապս:- Տատդ նեղացրեց տեղս էս աշխարհում,- աչքերը խոնավ՝ասաց պապս: Վերջին ժամանակներս իմ ու պապիս զրույցներն ավարտվում էին տատիս՝ անհասցե ծրարված կարոտներով:

-Պա՛պ, դե հո իր ձեռքը չէր մեռնելը, որ,- փորձեցի «պաշտպանել» տատիս, ում երբեք չէի տեսել, ում սիրում էի պապիս համար:

-Իր ձեռն էր,- ձեռնափայտը գետնին խփելով՝ գոռաց պապս,- իրեն չխնայեց, բոլորի հոգսն ուսերին էր առել:

-Տեսնես՝ տատդ ե՞րբ ապրեց, ոչ ոք չիմացավ:- Պապս խեղճացավ, դարձավ մի բուռ, և վախեցա գրկել նրան, որ չկորչի գրկիս մեջ: Ի՞նչ ասես ծերունուն, որ գրպանել է անհամար զղջումներ, կիսատություն ու աշխարհից և իրենից թաքցրած սեր, որը երբեք չի կարողացել արտահայտել՝ խստությունից դրդված:

«Կնոջը պիտի երես չտաս»- մի անգամ ասաց նա, բայց հիմա երես էր տալիս հիշողություններին:

-Սուսանս սաղ ըլներ, իրար հետ նարդի խաղայինք: -Գիտես՝ ինչ լավ էր խաղում, տղամարդը գլուխը պատին էր տվել, հա՞: Բա ի՞նչ գինի էր սարքում, հը՞մ, ամբողջ գյուղն ա խոսում:

Ես հազար անգամ լսել էի նրա պատմածները, ամեն անգամ տարբեր զգացողություններով էր պատմում, բայց, միևնույնն է, առաջին անգամ լսողի նման ուշադիր հետևում էի պապիս, մեկ-մեկ ուզում էի նույնիսկ առաջ ընկնել ու պատմել, բայց վախենում էի նեղացնել. հիմա միայն դրանք են մնացել սրտահովանք:

Փոքրամարմին պապս ավելի փոքրացավ, դարձավ մի բուռ:

-Էսօր կմնաս մոտս, չէ՞, կարոտել եմ, - գլուխս առավ ափերի մեջ:

-Դու մի՛շտ եղիր, պա՛պ, մի՛շտ մնա իմ պապը, որ ես էլ ինձ փոքր զգամ, թոռ զգամ:

...Այդ առավոտն ուրիշ էր, ուրիշ հոտ ուներ:

-Արի,՛-կանչեց պապս,- սեղանն արդեն պատրաստ է, իմ ձեռքով եմ ամեն ինչ պատրաստել, քո սիրած կիսաեփ ձուն էլ է պատրաստ, կիսաեփ էիր սիրում, չէ՞:

-Շուտ-շուտ արի, - ասաց ծերուկս, երբ արդեն ավտոբուսի մեջ էի:

-Կգամ, անպայման, կգամ, պա՛պ:

-Կգաս, միասին կխմենք իմ քաշած թթի արաղը:

...Եկել եմ, պա՛պ, կանգնել եմ պահարանիդ առաջ ու շորերիցդ հոտ եմ քաշում, քո հոտն եմ փնտրում: Սեղանիդ դրված ակնոցը սպասում է. իրերդ քեզ են որոնում: Այգուդ խնձորներն են հասել, ճյուղերը կպել են գետնին, բայց քաղող չկա, ո՞ւր ես, բոլորն իրենց տեղում են, բացի քեզնից, ո՞ւր ես, պա՛պ: Կանգնել եմ թթենու շվաքի տակ ու սպասում եմ, որ պիտի գաս, ու միասին խմենք մեր կենացը, բայց այսօր խմում եմ միայն քո կենացը.

-Կենա՛ցդ, պա՛պ… Երանի՜ մի քիչ էլ լինեիր, երանի՜ ես մի քիչ էլ թոռ լինեի:

ՕՖԵԼԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՆՈՐ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Լույս է տեսել պատմական գիտությունների թեկնածու Արմինե Եփրիկյանի մեթոդական ձեռնարկ-ուղեցույցը:

Կրթության արդի համակարգում դժվար է գերագնահատել մանկավարժական պրակտիկայի դերն ու նշանակությունը: Ակնհայտ է, որ մանկավարժական պրակտիկայի նկատմամբ ուսանողների շրջանում ձևավորվող ընդհանուր վերաբերմունքը սկսվում է նրանց իրազեկվածության պատշաճ մակարդակից, որի ապահովման և զարգացման նպատակին է միտված սույն մեթոդական ձեռնարկը: Հաշվի առնելով պետության և հասարակության համար մանկավարժի խիստ պատասխանատու մասնագիտացումը՝ համալսարանում առանձնակի ուշադրություն է հատկացվում մանկավարժական պրակտիկային: Այսօր մեր բուհում կրթության որակի բարձրացման և արդիականացման համատեքստում մանկավարժական պրակտիկան, ըստ էության, դարձել է առաջնահերթություն: Կրթության ոլորտի կադրերի պատրաստման համար միջոցներ են ձեռնարկվում համաշխարհային փորձի օգտագործման, նոր արդյունավետ մեթոդների ներդրման և զարգացման առումներով:

Մեթոդական ձեռնարկը նոր խոսք է պատմության ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողների մասնագիտական պրակտիկայի արդյունավետ կազմակերպման, նրանց մեթոդական գիտելիքների, կիրառական կարողությունների, հաղորդակցական հմտությունների, մանկավարժական գործիմացության և մասնագիտական ունակությունների ձևավորման ու շարունակական գործընթացում: Սույն ուղեցույցը միտված է առարկայականացնելու ՀՊՄՀ-ում մանկավարժական պրակտիկան առավել արդյունավետ դարձնելուն ուղղված ջանքերը, հեշտացնելու ուսուցման գործընթացի այս կարևոր ոլորտի կազմակերպումը: Հստակեցված են «պատմություն», «հասարակագիտություն» մասնագիտացմամբ մագիստրատուրայի ուսանողների մասնագիտական պրակտիկայի հիմնական սկզբունքները, խնդիրները, գործառույթները, մասնակիցների իրավունքները և պարտականությունները, մանրամասն նկարագրված են մասնագիտական պրակտիկայի տեսակները և նրանց կառուցվածքը:



Ուղեցույցը նախատեսված է Պատմության և իրավագիտության ֆակուլտետի («պատմություն», «հասարակագիտություն» մասնագիտացմամբ մագիստրատուրայի) համար: Այն օգտակար կլինի ինչպես մանկավարժական պրակտիկան ղեկավարող մեթոդիստ-դասախոսներին, այնպես էլ իրենց ապագա մասնագիտության մեջ հմտացող ուսանողներին:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2019-2020 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելություն

(հեռակա ուսուցում)

1. Հայոց պատմություն - Է.00.01 (1 տեղ)
2. Փիլիսոփայություն - Թ.00.01 (1 տեղ)
3. Մանկավարժության տեսություն և պատմություն - ԺԳ.00.01 (1 տեղ)
4. Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ռուսաց լեզու, մաթեմատիկա) - ԺԳ.00.02 (1 տեղ)
5. Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն - ԺԹ.00.01 (1 տեղ)
6. Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն) - ԺԹ.00.03 (1 տեղ)
7. Սոցիալական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ - ԻԲ.00.01 (1 տեղ)

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

Ասպիրանտուրա ընդունվելու համար տրվում է դիմում հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին).

2) օտար լեզու և ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ առարկաների ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ).

3) ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում.

4) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի).

5) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

Ստորև նշված օտար լեզուներից որևէ մեկից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում՝

1) անգլերենից՝ «TOEFL» (iBT) (այԲիԹի)՝ 46 և «IELTS» (ԱՅԼԹՍ)՝ 5.5 միավորը.

2) ֆրանսերենից՝ «TCF» (ԹիՍիէՖ)՝ 200 միավորը.

3) գերմաներենից՝ «on DaF» (օն ԴաՖ)՝ 60 միավորը:

Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում 25 միավորը:

Մասնագիտական քննության հարցաշարը, որն ընդգրկում է նախորդ աստիճանների ծրագրային նյութը, կազմվում է հաստատության մասնագիտական ամբիոնների (դեպարտամենտների), գիտական ստորաբաժանման կամ հանձնաժողովի կողմից և հաստատվում է հաստատության ղեկավարի կողմից:

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև <u>դեկտեմբերի 18-ը (ներառյալ)</u>:

Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննությունները կազմակերպվում են ս/թ <u>դեկտեմբերի 20-ից 23-ը /ներառյալ/</u>:

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 3-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն, հեռ. 59-70-29:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 5.12. 2019 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ